

վել, զգունդս բովանդակել<sup>1</sup>, ելանել հարկանել եւ ւաւար առնուլ զկողմանս Գամրաց: 13 Իսկ զաւրավարն սպարապետն Վասակ, վաղվաղակի գտուեալ հրամանս Նորա կատարեր. զզաւրս բազումս իբրեւ զերկերոյր եւ զվաթսուն հազարաց ի մի վայր կուտեր. հարկաներ ւաւար առնոյր զկողմանս Գամրաց մինչեւ ի քաղաքն յանկուրացոց. զվեց ամ զմիմեանց զհետ ւաւերեր զաշխարհ սահմանացն Յունաց: 14 Լցան ւաւրաւ բազմաւ եւ պեսպես մեծութեամբ, բռնութեամբ սաստիւ մեծաւ թշնամութեամբ ընդ կողմանս ընդ այնոսիկ:

ԳԼՈՒԽ ԺԲ.

1 Յաղագս խաղայ եպիսկոպոսի Բագրաւանդացոց, զոր էր ձեռնադրեալ եւ թողեալ էր Ներսեսի ետեղապահ յիւր տեղի. եւ թէ որպիսի՛ այր էր, եւ կամ որչափ նշանք կամ զաւրութիւնք որ ի նմանէն լինէին, կամ թէ ո՛րպէս կայր ի ճշմարտութեանն, եւ ոչ առնոյր ակն թագաւորին մեծի Արշակայ, եւ ընդդիմանայր եւս ընդդէմ Նորա վասն անաւրէնութեան գործոց ինչ. կամ ո՛րպէս ինսամ տաներ աղբատաց իբրեւ զեպիսկոպոսապետն Ներսես:

2 Այրս այս խաղ բուն էր սա ի Կարին գաւառէ, ի գեղջէ Մարագայ. ձեռնասուն էր սա եպիսկոպոսապետին Ներսեսի, զառաջեաւ իւրով զսա էր սնուցեալ: 3 Այլ իբրեւ ի միտս աջողակս եբեր, եւ յառաջադէմ եղեւ ի հաւատս, եւ հաւատարիմ յամենայն գործս գտաւ, իսկ իբրեւ յայնմ եւս առաւել ի պաշտանն՝ զոր ունէր զսերն ընդ եկեղեցին Աստուծոյ, ապա աղբատաց եւս տեսչութիւն ի սրբոյն Ներսեսէ սմա հաւատացաւ. իսկ յայնմ եւս առաւել զբարեխնամութիւն ցուցաներ:

4 Ապա եպիսկոպոսապետն Ներսես յորժամ երթայր յուղեզնացութիւնն յերկիրն Յունաց, ձեռնադրեաց զայս խաղ յեպիսկոպոսութիւն Բագրաւանդայ եւ Արշարունեաց, եթող զսա իւր փոխանակ ետեղապահ, եւ գնաց: 5 Իսկ աշխարհ ամենայն Յայոց լեզուին, ի գաւառաց գաւառաց, կողմանց կողմանց, տեղեաց տեղեաց մեծամեծք աշխարհակալք գաւառատեարք նահապետք մեծազգեացք եւ ամենայն ուխտ քահանայութեան, ժողովք միաբանական ժողովրդոցն, ի սուգ տխրութեան ընկղմեալ էին վասն իւրեանց հաւտապետ գլխաւորին, զի հեռացաւ ի Նոցանէ: 6 Իսկ սուրբն խաղ եպիսկոպոսն առ հասարակ աշխարհի տայր հրաման ի պահս եւ յաղաւթս մտանել եւ ի խնդրուածս, զի դարձ լիցի սրբոյն Ներսեսի: 7 Եւ զամենայն ժամանակս, որչափ եւ արգելաւ նա անդ, համակ խնդրէին պահաւք ժողովուրդքն. եւ ամենայնի իսկ խաղն առաջնորդէր Նոցա, ոչ ինչ պակաս քան զիւրեանց բուն

1 Յոր. վանդակել